ՀՏԴ : 929:891.981 Լևոնյան + 891.981

Doi:10.54503/0135-0536-2022.3-234

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ծննդյան 150-ամյակի առթիվ)*

Լրացավ հայագիտության բնագավառում ծանրակշիռ ավանդ ունեցած անհատներից մեկի՝ Գարեգին Սերոբի Լևոնյանի ծննդյան 150-ամյա հոբելյանը:

Զափազանց ընդգրկուն են եղել Գ. Լևոնյանի գործունեության ոլորտները և գրական-գիտական հետաքրքրությունների շրջանակները՝ արվեստի, մշակույթի, գրահրատարակչության պատմություն, գրական–պատմական նշանավոր իրադարձություններ ու անհատներ, ուստի ամենևին դյուրին չէ նրա «մասնագիտությունը» որոշելը: Հայագիտության բնագավառում խոր հետք են թողել նրա՝ «Հայ աշուղներ» (1892), «Հայոց պարբերական մամուլը» (1895, 1934), «Սայաթ-Նովա» (1931), «Թատրոնը հին Հայաստանում» (1941), «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (1946, 1958, 2012) հիմնարար աշխատությունները և բազմաթիվ այլ գործեր, որոնք հայ իրականության մեջ նոր երևույթ էին և այսօր էլ պահպանում են իրենց գիտական արդիականությունը:

Գ. Լևոնյանի կենսագրությունն ու գործունեությունն արդեն մի քանի տասնամյակ հայագետների ուշադրության կենտրոնում է: Գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց նպատակը եղել է, ժամանակակիցների բնորոշմամբ, «հանրագիտարանային գիտելիքների տեր մարդու» կյանքի ու գործունեության տարբեր անհայտ էջերի բացահայտումը և լայն հանրությանը ծանոթացնելը[1]: Ընդգծենք, որ Գ. Լևոնյանի կենսագրության ուսումնասիրման լավագույն աղբյուրն իր ծննդյան 50 և գրական գործունեության 30-ամյա հոբելյանների առթիվ 1922 թ. փետրվարին շարադրած «Գարեգին

---

* *Ներկայացվել է 25. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Մասնավորապես տե՛ս Ա. Ինճիկյան. Գարեգին Լևոնյան.– Գ. Լևոնյան. Հուշեր, Երևան, 1959, էջ 3–10, Շ. Գրիգորյան. Գարեգին Լևոնյան.– Գ. Լևոնյան. Երկեր, Երևան, 1967, էջ 3–16, Ս. Բ. Հարությունյան. Գարեգին Լևոնյան.– ՊԲՀ, 1970, № 1, էջ 229–235, Ս. Թոփչյան. Գ. Լևոնյանի էսթետիկայի մի քանի հարցերի մասին.– «Էսթետիկայի հարցեր», գիրք երկրորդ, Երևան, 1972, էջ 190–214, Թ. Գալստյան. Գարեգին Լևոնյան (ծննդյան 100-ամյակի առթիվ).– «Սովետական Հայաստան», 26. X. 1972, էջ 3, նույնի՝ Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը, Երևան, 1979, Խ. Բադիկյան, Գևորգյան ճեմարանի երախտավորները (Գարեգին Լևոնյան).– «Էջմիածին», 2004, Զ, էջ 97–105, Մ. Մկրտչյան. Գեղարվեստական կրթության հարցերը «Գեղարվեստ» հանդեսի էջերում.– ՊԲՀ, 2020, № 1, էջ 141–148, Ս. Հովհաննիսյան. Հայ մշակույթի երախտավորը (ուրվագիծ Գարեգին Լևոնյանի հայագիտական գործունեության).– «Բանբեր հայագիտության», 2022, № 2, էջ 153–174, Ա. Ասատրյան. ՀՍՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչը. Գարեգին Լևոնյան.– «Գիտություն», 2022, սեպտեմբեր, № 9, էջ 4:*

Լևոնյան. կյանքը և աշխատանքը» անտիպ հուշերն են (Լևոնյանն այստեղ հանդես է գալիս «Վաղինակ» ծածկանունով): Հուշագրության առաջին բաժնում մանրամասն շարադրված է նրա կյանքի պատմությունը, իսկ երկրորդ բաժնում՝ կատարած գրական-գեղարվեստական, հասարակական ու կրթամշակութային գործունեությունը: Գ. Լևոնյանն այն նախատեսում էր հրատարակել իբրև «Գեղարվեստ»-ի մատենաշարի երրորդ գիրք, սակայն այդպես էլ չի տպագրվել[2]: Այն է՝ Գ. Լևոնյանի կյանքի ու գործունեության մասին առաջին ծավալուն շարադրանքը պատկանում է իր գրչին:

Ստորև հրատարակվող անտիպ վավերագրերը Գ. Լևոնյանի ինքնակենսագրություններն են՝ գրված Երևանում 1925 թ. սեպտեմբերի 9-ին և 1947 թ. հունվարի 28-ին:

Առաջին ինքնակենսագրության շարադրման պատճառ է դարձել Գ. Լևոնյանի՝ Թիֆլիսից Երևան տեղափոխվելը և 1925 թ. հունիսին լուսավորության ժողկոմատի համակարգում (իբրև Հնությունների պահպանության կոմիտեի անդամ) աշխատանքի անցնելը[3]: Ինքնակենսագրականում (Հեղինակն այն անվանել է «կենսագրական տեղեկանք») ժամանակագրական ձևաչափով, երրորդ դեմքով Գ. Լևոնյանը ներկայացնում է իր կյանքի և գրական-հասարակական գործունեության հիմնական էջերն ու իրադարձությունները: Այն աչքի է ընկնում օբյեկտիվությամբ և միանշանակ դրականորեն տարբերվում է բազմաթիվ ժամանակակիցների ինքնակենսագրություններից: Այսպես՝ ի տարբերություն իր շատ գրչակից-ժամանակակիցների, որոնք սրբագրել են կամ էլ փորձել մոռացության մատնել նախախորհրդային շրջանի իրենց կենսագրության որոշ էջեր, Գ. Լևոնյանը չի խուսափել Հայաստանի Հանրապետության շրջանում իր ծավալած գործունեության (մասնավորապես՝ Երևանում ՀՀ ֆինանսների նախարարության համակարգում պաշտոնավարելու և դրամանիշերի տպագրություն կազմակերպելու), ինչպես նաև մինչ այդ (1903–1906 թթ.) Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցության Վաղարշապատի տեղական կոմիտեի անդամ լինելու փաստերի հիշատակումից:

Հաջորդ տարիներին Գ. Լևոնյանն աշխատել է սույն ինքնակենսագրության տեքստի վրա, հավելումներ կատարել, պատրաստել նոր տարբերակներ: Այդ է փաստում ՀՀ գրականության և արվեստի թանգարանի իր անունը կրող ֆոնդում հայերեն և ռուսերեն տարբերակներով մի քանի ինքնակենսագրության առկայությունը, որոնք թվագրված են 1926–1945 թվականներով[4]: Պարբերաբար ինքնակենսագրություններ գրելու առիթ է եղել նրա հետևյալ համոզմունքը. «Ամեն մի մարդ ինքը միայն գիտի իր կենսագրության ամեն մանրամասնությունը: Մահվանից հետո ուրիշների գրածը հաճախ լինում է թերի և սխալ տեղեկությունների վրա հիմնված»[5]: Երկրորդ փաստաթուղթն այդ հավելումների արդյունքում 1942 թ. դեկտեմբերի 15-ին Գ. Լևոնյանի

---

[2] *ՀՀ գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1891, թ. 1–143:*

[3] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 122, ց. 5, գ. 19, թ. 1–2:*

[4] *ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1892, թ. 1–2, № 1893, թ. 1–13, № 1895, թ. 1–4, № 1896ա, թ. 1–5, 1896բ, թ. 1–3:*

[5] *ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1891, թ. 138:*

գրած ինքնագիր ինքնակենսագրությունն է (այն ևս շարադրված է երրորդ դեմքով և ունի «կենսագրական տեղեկանք» խորագիրը)[6]: Վերջինի մեքենագիր օրինակի վրա, սովորության համաձայն, նա շարունակել է աշխատել: Մահվանից ամիսներ առաջ՝ 1947 թ. հունվարի 28-ին, մատիտով խմբագրել է այն, կատարել հավելումներ: Ահա այս տարբերակն էլ հրատարակության ենք պատրաստել:

Միևնույն «կենսագրական տեղեկանք» անվանումը կրող սույն ինքնակենսագրությունները, մեկը մյուսին լրացնելով, ավելացնում են Գ. Լևոնյանի մասին մեր ունեցած գիտելիքը: Դրանք հավաստի փաստեր են պարունակում և, վստահաբար, օգտակար կարող են լինել հայ մշակույթի անխոնջ մշակի կյանքն ու գործունեությունը հետազոտող հայագետների համար, ունեն ճանաչողական կարևոր նշանակություն:

Առաջին փաստաթուղթը պահվում է Հայաստանի ազգային արխիվի ՀԽՍՀ լուսավորության նախարարության ֆոնդում, իսկ երկրորդը՝ ՀՀ գրականության և արվեստի թանգարանի Գ. Լևոնյանի ֆոնդում: Դրանք հրատարակում ենք առանց էական լեզվաոճական փոփոխությունների (կատարել ենք միայն ուղղագրական ու կետադրական շտկումներ): Կատարված հավելումները բերված են ուղղանկյուն փակագծերում ([]):

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

№ 1

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ
(Կենսագրական տեղեկանք)

9 սեպտեմբերի 1925 թ.
Երևան

Ծնվել է Լենինականում 1872 թ. հոկտ[եմբերի] 24-ին:

Հայրը Ախալքալաքի գավառի Կարծախ գյուղացի Սերոբե Լևոնյան (աշուղ Ջիվանի)[7], մայրը՝ լենինականցի մի արհեստավորի աղջիկ[8]:

– Գրաճանաչությունը սովորելով մորից՝ Գ[արեգին] Լ[ևոնյանը] տարրական կրթությունն ստանում է Լենինականում մի մասնավոր դպրոցում[9]: Ապա սովորում է Ս. Փրկչի վիճակային 4-դասյա ուսումնարանում[10] և մտնում ռուսաց 6-դասյա դպրոցը[11]:

---

[6] *ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1894ա, թ. 1–2 շրջ.:*

[7] *Ջիվանին (1846–1909) XIX դարավերջի և XX դարասկզբի մեծահամբավ աշուղներից էր, ով նկատելի հետք է թողել հայկական երգ-երաժշտության պատմության մեջ:*

[8] *Գ. Լևոնյանի մայրը՝ Աշխեն Տալյանը, ևս ստեղծագործական աշխատանքի հակումներ է ունեցել: Կյանքի վերջին տարիներին Հովհաննես Թումանյանի հորդորով գրել է հեքիաթներ, բանաստեղծություններ ու երգեր: Մահացել է 1918 թվականին՝ Թիֆլիսում:*

[9] *Մուշեղ Մամիկոնյանի մասնավոր դպրոցում սովորել է 1880–1883 թթ.:*

[10] *Այստեղ սովորել է 1883–1885 թթ.՝ մինչև դպրոցի փակումը:*

[11] *Ռուսական արքունական վարժարանում սովորել է 1885–1888 թթ.:*

– Կարճ ժամանակում որպես գործակատար ծառայում է քաղաքի առևտրական տներից մեկում[12]:

– 1891-ին բաց է անում գրավաճառանոց[13]:

– 1894-ին նշանակվում է վարիչ տեղական մի գրադարանի:

Մինչև այդ ժամանակները Գ. Լ[ևոնյանը] զուգընթացաբար պարապում է նկարչությամբ (գրաֆիկա) և գրական աշխատանքներով, թղթակցում է Թիֆլիսի թերթերին և յուրս ընծայում առանձին գրքերով երկու գիրք. ա. «Հայ աշուղներ», 1892[14] և բ. «Հայոց պարբերական մամուլը», 1894[15]: Վերջին աշխատությունը Կ. Պոլսում ստանում է գրական մրցանակ[16]:

– 1895-ին Գ. Լ[ևոնյանն] իր ծնողների հետ տեղափոխվում է Թիֆլիս:

– Գեղարվեստական-գրական լայն ձգտումների հանդեպ իր գավառական կրթությունը շատ պակասավոր համարելով՝ Գ. Լ[ևոնյանը] 1896-ին, ստիպենդիա գտնելով[17], գնում է Մոսկվա, ուր մնալով երկու տարի, մի կողմից շարունակում է նկարչության մեջ առաջադիմել, մյուս կողմից՝ պատրաստվել միջնակարգ դպրոցի վերջնական վկայական ձեռք բերելու:

– 1898-ին Մոսկվայից տեղափոխվում է Լենինգրադ՝ դարձյալ նկարչությունից պատրաստվելով ակադեմիկոս Դմիտրևի[18] գեղարվեստական արվեստանոցում, մտնում է պետական (այն ժամանակ կոչվում էր «կայսերական») գեղարվեստից ակադեմիան՝ իրեն մասնագիտություն ընտրելով գեղարվեստի տեսական-մանկավարժականը (պրոֆ. Կ. Մակովսկի[19]) և գործնականը՝ փորագրություն (պրոֆ. Մաթե[20]):

– 1902-ին՝ իր ուսանողական շրջանն ավարտած, աշնանը վերադառնում է Կովկաս՝ հրավիրված լինելով Էջմիածնի ճեմարանում ստանձնել նկարչության ուսուցչի պաշտոնը[21]:

– 1906-ին՝ դպրոցական արձակուրդներից վաղ, գնում է Գերմանիա և Լայպցիգում 5 ամիս աշխատում փորագրական արվեստանոցներում:

– 1907-ի ամառը թողնում է Էջմիածինը և փոխադրվում Թիֆլիս, ուր նույն թվի աշնանից Կովկ[ասյան] ուսումն[ական] շրջանի հոգաբարձության իրա-

---

[12] 1888–1890 թթ. աշխատել է Բեբուրյան եղբայրների և Հակոբ Կրիտյանի առևտրական տներում:

[13] Գ. Լևոնյանի և ալեքսանդրապոլցի տպարանատեր Գևորգ Սանոյանցի բացած գրավաճառանոցը կոչվում էր «Շիրակ»:

[14] Տե՛ս Գ. Լ ե ւ ո ն ե ա ն. Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, 1892, 151 էջ:

[15] Տե՛ս Գ. Լ ե ւ ո ն ե ա ն. Հայոց պարբերական մամուլը: Պատմական տեսութիւն սկզբից մինչև մեր օրերը (1794–1894), ընդարձակ ծանօթութիւններով, Ալեքսանդրապոլ, 1895, 570 էջ:

[16] 1894 թ. գրքի ձեռագիրն արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակի:

[17] Գ. Լևոնյանին ամսական 50 ռուբլի կրթաթոշակ էր նշանակել Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը:

[18] Դմիտրիև-Կավկազսկի Լև (1849–1916). ռուս նշանավոր նկարիչ, փորագրիչ: Գեղարվեստի ռուսական կայսերական ակադեմիայի անդամ:

[19] Մակովսկի Կոնստանտին (1839–1915). ռուս ճանաչված գեղանկարիչ:

[20] Մաթե Վասիլի (1856–1917). ռուս նշանավոր գեղանկարիչ, Գեղարվեստի ռուսական կայսերական ակադեմիայի անդամ:

[21] Նրան ճեմարանում դասավանդելու հրավեր էր ուղարկել նորանշանակ տեսուչ Կարապետ Կոստանյանը:

վաստության տակ հիմնում է գեղարվեստական կուրսեր տեսական և գործնական պարապմունքների համար: Կուրսերը տևում են 5 տարի:

– 1908-ից Գ. Լ[ևոնյանը] Թիֆլիսում խմբագրում և հրատարակում է «Գեղարվեստ» պատկերազարդ հանդեսը՝ հետագայում հասցնելով մինչև 8-րդ գիրքը[22]:

1910–1911 ուսումն[ական] տարում պաշտոնավարում է Ներսիսյան դպրոցում՝ նկարչության ուսուցչի պաշտոնով:

1912-ին Գ. Լ[ևոնյանը] նորից գնում է Եվրոպա՝ այս անգամ արևմտյան ազգերի գեղարվեստական հիշատակարաններն ու ժամանակակից ստեղծագործությունները տեսնելու և ուսումնասիրական պրպտումներ անելու: Ճանապարհորդությունը տևում է 18 ամիս՝ շրջելով Եվրոպայի գրեթե բոլոր պետությունները[23]:

– Մեծ պատերազմի[24] սկզբից մինչև փետր[վարյան] հեղափոխությունը զբաղվում է բացառապես իր գրական-գեղարվեստական աշխատանքներով՝ առանց վճարովի պաշտոն ունենալու, աշխատակցում է «Մշակ» լրագրին և շարունակում է «Գեղարվեստ»-ի հրատարակությունը:

– 1918-ին Հայաստանում դաշն[ակցական] կառավարության օրոք ֆինանսների մինիստրը (Ջաղեթյան[25]) Գ. Լ[ևոնյան]ին հրավիրում է Երևան՝ հայկական չեկերի տպագրության գործը կազմակերպելու[26]: Երևանում գործը

---

[22] Այդ շրջանում Գ. Լևոնյանը նախատեսում էր Երևանում վերսկսել «Գեղարվեստ»-ի հրատարակությունը: Այդ նպատակով 1925 թ. ապրիլին նա դիմել էր ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ Ա. Մռավյանին՝ խնդրելով թույլատրել տարեկան երկու համարով Երևանում շարունակել պարբերականի հրատարակությունը: Դիմումը արժանացել էր դրական պատասխանի: 1925 թ. նոյեմբերին նկարիչ Մ. Սարյանին և գրող Նար-Դոսին ուղղված նամակներում Գ. Լևոնյանը խնդրում էր աշխատակցել պարբերականին: Հայ մամուլի մատենագիտական ցանկերում (այդ թվում՝ Գ. Լևոնյանի կազմած) «Գեղարվեստ»-ի ութերորդ համար չի հիշատակվում. վերջինը 1921 թ. տպագրված յոթերորդ համարն է [Գ. Լ ևոնյան. Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 53, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794–1967), կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Երևան, 1970, էջ 243, Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980), կազմեց՝ Մ. Բաբլոյան, Երևան, 1986, էջ 70]:

[23] Լևոնյանը Թիֆլիս է վերադարձել 1913 թ. վերջին: Եվրոպական երկրներում շրջագայությունից ստացած տպավորությունները 5 գրքով հրատարակելու նրա ծրագիրն անավարտ է մնացել. 1914 թ. Թիֆլիսում հրատարակվել է «Աշխարհէ-աշխարհ կամ 20.000 վերստ Եւրոպայում» վերնագրված ուղեգրության առաջին մասը:

[24] Նկատի ունի 1914 թ. օգոստոսի 1-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմը:

[25] Ֆինանսների նախարարի օգնական Գրիգոր Ջաղեթյանը 1919 թ. փետրվարից փոխարինել է նախարար Արտաշես Էնֆիաճյանին, իսկ 1919 թ. հունիսի 24-ից մինչև օգոստոսի 8-ը եղել է նախարար: Հետագայում պաշտոնավարել է իբրև պետական վերահսկիչ:

[26] Գ. Լևոնյանը Երևան է հրավիրվել 1918 թ. դեկտեմբերին: 1919 թ. հունիսին հանձնարարություն է ստացել Թիֆլիսում ձեռք բերել վիմագրական և այլ մեքենաներ, գործիքներ ու թուղթ: Այնուհետև նշանակվել է ՀՀ ֆինանսների նախարարության պետական արժեթղթերի տպագրության էքսպեդիցիայի վարիչ:

կազմակերպելուց և մի քանի ամիս պաշտոնավարելուց հետո վերադառնում է Թիֆլիս:

– Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև Վրաստանի խորհրդայնացումը և այնուհետև Գ. Լ[ևոնյանը] շարունակում է զբաղվել իր ազատ պրոֆեսիայով՝ մի քանի ամիս միայն պաշտոնավարելով Խ[որհրդային] Հայաստանի պետակ[ան] գրադարանի Թիֆլիսի ներկայացուցչի (Ս. Կանայան[27]) փոխարեն՝ նրա Երևան կանչվելու պատճառով: Այնուհետև երբ հիմնվում է Հայարտունը[28] և սկսվում է հրատարակվել «Մարտակոչ»-ը, Գ. Լ[ևոնյան]ի բոլոր աշխատանքները կենտրոնացած են եղել այդ հիմնարկությունների մեջ՝ որպես խորհրդ[ի] անդամ Հայարտան և աշխատակից «Մարտակոչ»-ի: Միևնույն ժամանակ մի տարի դասախոսել է դրամատիկ[ական] ստուդիայում: Հայարտան սենյակներում են տարվել նաև Գ. Լ[ևոնյան]ի մի նոր գրական խոշոր աշխատության կոլեկտիվ պարապմունքները: Այդ գրական գործն է՝ «Կենսագրական հանրագիտարան հայ գործիչների»[29]:

– 1923-ին Գ. Լ[ևոնյանը] նշանակվում է Վրաստանի հեղափոխական թանգարանի աշխատակից անդամ:

– Նույն թվականին լինում է հիմնադիր անդամներից մեկը և վարչութ[յան] անդամը «Հայոց պատմա-ազգաբանական ընկ[երության] Վրաստանում»:

– Նույն թվի աշնանը Գ. Լ[ևոնյանը] գնում է Լենինական՝ այնտեղի գավգործկոմից հրավիրված լինելով տեղում գեղարվեստա-արդյունաբերական դպրոց հիմնելու:

– Նույն թվին լուսժողկոմի[30] կարգադրությամբ մեկնում է Թիֆլիս՝ Անդրկովկասյան մամուլի ցուցահանդեսում հայկական պավիլիոնը կազմակերպելու համար:

– Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] միաժամանակ երկու հրավեր է ստանում Հայաստանից. ա. ստանձնել Երևանի գեղարվեստական-տեխնիկական դպրոցի վարիչի պաշտոնը, բ. ստանձնել Էջմիածնի թանգարան-մատենադարանի օգնական-վարիչի պաշտոնը:

– 1924-ի աշնանից Գ. Լ[ևոնյանը] վերջնականապես տեղափոխվում է Հայաստան:

– 1925-ի սկզբից Երևանում հրավիրվում է ստանձնելու Հայաստ[անի] օգնութ[յան] կենտր[ոնական] կոմիտեի գեղարվեստական-հրատարակչ[ական] բաժնի վարիչի և «Հրավիրակ»-ի խմբագրի պաշտոնները:

– Նույն թվին լուսժողկոմատի կողմից նշանակվում է Փարիզում բացվելիք արվեստա-արդյունաբերական ցուցահանդեսում Հայաստանի բաժինը կազմակերպող հանձնաժողովի անդամ և քարտուղար:

---

[27] *Կանայան Ստեփան (1860–1936). հայ ճանաչված բանասեր, պատմաբան և մանկավարժ:*

[28] *Վրաստանում բնակվող հայ գրողներին ու արվեստագետներին միավորելու և նրանց գործունեությունը նորահաստատ խորհրդային իշխանության նախանշած նպատակներին ծառայեցնելու նպատակով 1921 թ. մարտին Թիֆլիսում ստեղծված գրական-մշակութային կազմակերպություն:*

[29] *Գ. Լևոնյանի «Հայ կերպարվեստագետներ. միջին դարերից մինչև մեր ժամանակը» կենսագրական բառարանն անտիպ է:*

[30] *1923 թ. հունվարից մինչև 1929 թ. հոկտեմբերը (իր մահը) ՀՍԽՀ լուսավորության ժողկոմն Ասքանազ Մռավյանն էր:*

— Նույն թվին ընտրվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի անդամ:

— Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] հրավեր է ստանում Պետակ[ան] համալսարանի վարչությունից՝ առաջիկա 1925-1926 ուսումն[ական] տարվանից դասախոսելու գեղարվեստի պատմություն:

— Նույն թվին Հայկենտգործկոմի և ժողկոմխորհի կողմից հրատարակվելիք «Հայաստանը — 5 տարի» ժողովածուի[31] խմբագրական կոլեգիայից հրավիրվում է որպես այդ ժողովածուի գեղարվեստական տպարանա-տեխնիկական մասի վարիչ:

Ծանոթություն

— Գարեգին Լևոնյանն իր գրական գործունեության ընթացքում աշխատակցել է 40-ից ավելի պարբերականների՝ տալով հոդվածներ պատմա-հնագիտական, բանասիրական-քննադատական, հրապարակախոսական և այլն:

— Հրապարակական[32] դասախոսություններ է կարդացել 80-ի չափ թե՛ խ[որհրդային] Միության սահմաններում և թե՛ արտասահմանում:

— Կազմակերպել է հայ մամուլի ցուցահանդեսներ 5 անգամ. Թիֆլիսում, Լենինականում և Երևանում:

- Հրատարակել է իր կազմած մի շարք դասագրքերն ու ձեռնարկները տեղագրության, նկարչութ[յան] և գծագրության[33]:

— Անվճար պաշտոններ վարել է, բացի վերևում հիշվածներից, հետևյալ հասարակական-կուլտուրական հիմնարկներում. Կովկ[ասյան] Հայոց հրատարակչ[ական] ընկ[երության] խորհրդի անդամ և քարտուղար, Հայ արվեստագետների միութ[յան] խորհրդի անդամ և քարտուղար, Հայոց ազգագրակ[ան] ընկերութ[յան] խմբագր[ական] ժողովի անդամ, Հայոց դրամատիկ[ական] ընկերութ[յան] ժյուրիի անդամ:

— Քաղաքական կուսակցություններից Գ. Լ[ևոնյանը] մի քանի տարի գործել է Էջմիածնում եղած ժամանակ Հնչակյան կուսակց[ության] մեջ՝ լինելով տեղ[ական] կոմիտեի անդամ:

Կազմեց՝ Գարեգին Լևոնյանց

ՀԱԱ, ֆ. 122, ց. 5, գ. 19, թ. 3–4 շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

---

[31] *Տե՛ս Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920–1925, հրատ. ՀՍԽՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի, Երևան, 1926, 472 էջ:*

[32] *Հրապարակային:*

[33] *Մասնավորապես տե՛ս Գ. Լևոնեան. Գծագրութիւն եւ նկարչութիւն: Տարրական դասընթաց, Մաս առաջին. Ստորին դասարանների համար, Թիֆլիս, 1905, նույնի՝ Հայկական վայելչագրութիւն եւ գեղագրութիւն դպրոցների եւ ընտանիքների համար, Տետրակ Ա. Տարրական դասընթաց, Պարզ գրութիւն, Թիֆլիս, 1908, Տետրակ Բ. Միջին դասընթաց, Պարզ եւ վայելուչ գրութիւն, Թիֆլիս, 1908, Տետրակ Գ. Մասնագիտական դասընթաց, Գեղագրութիւն, Թիֆլիս, 1908, նույնի՝ Գծագրութիւն եւ նկարչութիւն: Տարրական դասընթաց, Առաջին մաս. Գծեր, ձեւեր, մարմիններ, ստորին դասարանների համար, Թիֆլիս, 1909, Երկրորդ մաս. Հեռանկար (պերսպեկտիվա), միջին դասարանների համար, Թիֆլիս, 1909:*

№ 2

ԳԱՐԵԳԻՆ ՋԻՎԱՆԻ ԼԵՎՈՆՅԱՆ
(Կենսագրական տեղեկանք)

28 հունվարի 1947 թ.
Երևան

Ծնվել է Ալեքսանդրապոլում (Լենինական) 1872 թ. հոկտեմբերի 24-ին աշուղի ընտանիքում: Տարրական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցներից մեկում, միջնակարգը՝ ռուսաց քաղաքային ուսումնարանում: Պատանի հասակից սիրել է արվեստ և գրականություն: 1892-ին լույս է ընծայում իր անդրանիկ աշխատությունը՝ «Հայ աշուղներ», 1895-ին լույս է տեսնում նրա երկրորդ աշխատությունը՝ «Հայոց պարբերական մամուլը», որն արժանանում է Կ. Պոլսում Սահակ-Մեսրոբյան մրցանակին:

1895-ին Գ. Լևոնյանն իր ծնողների հետ տեղափոխվում է Թիֆլիս, ուր մնալով մի քանի տարի, ստիպենդիա է ճարում[34] և գնում է Մոսկվա՝ նկարչություն սովորելու:

1898-ին նա գնում է Պետերբուրգ (Լենինգրադ), որտեղ ակադեմիկոս [Լ.] Դմիտրիևի արվեստանոցում աշխատելուց հետո մտնում է Արվեստների ակադեմիա (Академия художеств)*՝ աշխատելով պրոֆ. [Վ.] Մաթեի մոտ:*

1902-ի աշնանը Գ. Լ[ևոնյանը] վերադառնում է Կովկաս՝ հրավիրված լինելով Էջմիածնի ճեմարան նկարչության ուսուցիչ: Ճեմարանում նրա պաշտոնավարությունը տևում է 5 տարի:

1906-ին նա մեկնում է Գերմանիա՝ Լայպցիգում մնալով 5 ամիս և աշխատելով փորագրության արվեստի մեջ հմտություն ձեռք բերելու մի հայտնի պոլիգրաֆի գործարանում: Վաղարշապատում եղած ժամանակ մոտ 3 տարի գործել է Հնչակյան կուսակցության տեղական կոմիտեի մեջ[35]: 1907-ին Գ. Լ[ևոնյանը] վերադառնում է Թիֆլիս, ուր բաց է անում Գեղարվեստական կուրսեր, որտեղ սովորողներն ավարտելիս ստանում են նկարչության և ուսուցչի կոչում: 1908-ից նա սկսում է խմբագրել և հրատարակել «Գեղարվեստ» գրական-արվեստագիտական ժուռնալը՝ իր շուրջը գրավելով ժամանակի լավագույն գրողներին և արվեստագետներին («Գեղարվեստ»-ի հրատարակությունը ընդհատումներով տևում է մինչև 1921 թվականը):

1910–11 ուսումն[ական] տարում Գ. Լ[ևոնյանը] պաշտոնավարել է Ներսիսյան դպրոցում որպես նկարչության ուսուցիչ: 1912-ին նա նորից է մեկնում արտասահման՝ նպատակ ունենալով մոտիկից ուսումնասիրել Արևմտյան Եվրոպայի նյութական կուլտուրայի նշանավոր հուշարձանները, ինչպես և համաշխարհային հռչակ ունեցող կերպարվեստագետների գործերը: Այս ճանապարհորդությունը տևում է 18 ամիս, նա ավել կամ պակաս չափով լինում է Ֆինլանդիայում, Շվեդիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտա-

[34] *Ինչպես նախորդ դեպքում, այնպես էլ այստեղ Լևոնյանը չի գրում, որ կրթաթոշակ ստացել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:*

[35] *Այս նախադասությունը մատիտով ջնջել է: Նպատակահարմար ենք համարել այն վերականգնել:*

լիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Բելգիայում և Հոլանդիայում:

Համաշխարհային առաջին պատերազմի սկզբից մինչև փետրվարյան հեղափոխությունը Գ. Լ[ևոնյանը] Թիֆլիսում զբաղվում է բացառապես գրական-գեղարվեստական աշխատանքներով. շարունակում է «Գեղարվեստ» հանդեսի հրատարակությունը և ընթացիկ հոդվածներով աշխատակցում «Մշակ» լրագրին:

1916–1917 ուսումն[ական] տարվա ընթացքում Հայոց ազգագրական ընկերության հիմնած հայագիտական կուրսերում դասախոսում է հայ գեղարվեստի պատմություն:

Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայից մինչև Վրաստանում սովետական իշխանության հաստատումը և այնուհետև Գ. Լ[ևոնյանը] շարունակում է պարապել իր ազատ պրոֆեսիայով՝ 1919 թվին մի քանի ամիս միայն Երևանում վարելով պետական տպարանում «Հայկական չեկերի» տպագրության գործը:

1921-ին Գ. Լ[ևոնյանն] ընտրվում է Վրաստանի Հեղ[ափոխական] թանգարանի աշխատակից անդամ:

Նույն թվին ժող[ովրդական] համալսարանի վարչությունից հրավեր է ստանում Հավլաբարի բաժանմունքում կարդալ դասախոսություններ գրականության և արվեստի շուրջը:

Այնուհետև երբ Թիֆլիսում հիմնվում է Հայ արվեստի տունը (Հայարտուն) և սկսում է հրատարակվել «Մարտակոչ» լրագիրը նույն շենքում, Գ. Լ[ևոնյանն] իր աշխատանքները կենտրոնացնում է այդ հիմնարկության մեջ՝ որպես Հայարտան խորհրդի անդամ և աշխատակից «Մարտակոչ»-ի:

1923-ին Գ. Լ[ևոնյանը] լինում է հիմնադիր անդամներից մեկը, ապա և խորհրդի անդամ Վրաստանի Հայոց պատմա-ազգաբանական ընկերության:

Նույն թվի աշնանը գնում է Լենինական՝ այնտեղի գործկոմից հրավեր ստացած լինելով քաղաքում հիմնելու գեղարվեստական դպրոց: Սակայն խնդիրը դեռ չվերջացած՝ լուսժողկոմատի կողմից կանչվում է Երևան և գործուղվում է Թիֆլիս՝ այնտեղ բացվելիք Անդրկովկասյան մամուլի ցուցահանդեսում Հայաստանի բաժանմունքը կազմակերպելու:

1934-ին Գ. Լ[ևոնյանը] Հայարտան դրամատիկական ստուդիայում կարդում է դասախոսություններ գեղարվեստի պատմությունից:

Նույն թվին ՀՍԽՀ լուսժողկոմատից հրավեր է ստանում ստանձնելու Երևանի Գեղարդտեխնիկումի վարիչի պաշտոնը:

Դարձյալ նույն թվին նրան հրավիրում են Էջմիածնից՝ այնտեղի պետական թանգարանի վարիչի տեղակալ: Գ. Լ[ևոնյանն] այդ պաշտոններից թե՛ մեկից, թե՛ մյուսից հրաժարվում է:

1925-ի վերջերին Գ. Լ[ևոնյանը] թողնում է Թիֆլիսը և տեղափոխվում Երևան, ուր լուսժողկոմատի կողմից նշանակվում է Փարիզում բացվելիք արվեստա-արդյունաբերական ցուցահանդեսում հայկական բաժինը կազմակերպող հանձնաժողովի քարտուղար:

Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից հրավիրվում է որպես հրատարակչական բաժնի վարիչ և «Հրավիրակ» ժուռնալի խմբագիր տեխնիկական[36]:

Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] ընտրվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի անդամ:

Նույն թվին պետպլանին կից «Խ[որհրդային] Հ[այաստան]. 5 տարի» ժողովածուի խմբագրության կողմից Գ. Լ[ևոնյան]ին է հանձնվում այդ հրատարակության տպագրության գեղարվեստական-տեխնիկական գործի խնամքը և հսկողությունը:

1926-ին ընտրվում է ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ և ապա ուղղագրական հանձնաժողովի անդամ և քարտուղար:

Նույն թվին ինստիտուտի կողմից նշանակվում է ներկայացուցիչ անդամ Հայաստանի գավառագիտական բյուրոյի (կենտրոնական):

1927-ին Գ. Լ[ևոնյանը] հրավիրվում է Պետական հրատարակչություն՝ հրատ[արակչական] բաժնի գեղ[արվեստական] տեխնիկական գործերի հրահանգիչ, պաշտոնավարում է 5 տարի:

Նույն թվին ընտրվում է Հայաստանի կերպարվեստագետների ընկերության վարչության անդամ, ապա և նախագահ:

Նույն թվից նաև Հայաստանի Գիտական աշխատավորների սեկցիայի (ԳԱՍ) անդամ:

1926–1927 ուսումն[ական] տարում Գեղարդտեխնիկումում դասախոսում է արվեստի պատմություն:

1928-ին Գիտ[ության] և արվ[եստի] ինստիտուտի Գ[եղարվեստի] բաժնում ընտրվում է գեղարվեստական տերմինոլոգիա մշակող հանձնաժողովի անդամ:

1932-ին ընտրվում է Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի անդամ:

Նույն թվին Գրողների միությունը տոնում է Գ. Լ[ևոնյանի] գրական-արվեստագիտական գործունեության 40-ամյակը: ՀՍԽՀ կենտգործկոմը նրան շնորհում է արվեստի վաստակավոր գործչի կոչում, իսկ լուժողկոմատի միջնորդությամբ նրան նշանակում են անհատական կենսաթոշակ:

Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] հրավիրվում է «Հայկական սովետական հանրագիտարանի» խմբագրություն՝ որպես գրականության և արվեստների բաժնի գիտնական քարտուղար:

1937–1939 թվերին Գ. Լ[ևոնյանն] արվեստի պատմությունից դասախոսում է Հայկինոյի ստուդիայում:

1938–1939 ուսում[նական] տարում հրավիրվում է Մանկավարժական ինստիտուտ՝ որպես դասախոս արվեստի պատմության. այդ պաշտոնավարությունը տևում է մինչև 1942 թ.: Այդ թվերին հայ արվեստի պատմությունից մի ցիկլ կարդում է նաև [Գ.] Սունդուկյանի անվան Պետ[ական] դրամայի կոլեկտիվի համար:

1939-ին Հայաստանի Գերագույն սովետի նախագահությունից ստանում է պատվոգիր՝ Մոսկվայում կայացած Հայ արվեստի դեկադայի առնչությամբ:

[36] *Բառը մատիտով ջնջել է՝ դարձնելով «տեղակալ»:*

1939 թվի հունվարից մինչև [19]41 թվի վերջը Գ. Լ[ևոնյանը] պաշտոնավարում է նաև Երաժշտ[ական] գիտա-հետազոտական կաբինետում՝ որպես ավագ կոնսուլտանտ:

1940–1941 ուստարում Գ. Լ[ևոնյանը] հրավիրվում է Պետ[ական] համալսարան՝ որպես դասախոս արվեստի պատմությունից, այդ պաշտոնը շարունակվում է մինչև այժմ: Նույն թվից Գ. Լ[ևոնյանը] գիտ[ական] խորհրդի անդամ է Արմֆանի[37] պատմության և գրականության ինստիտուտներում:

Նույն թվից անդամ է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի: 1932 թվից անդամ է Հայաստանին սովետական գրողների, 1939-ից՝ խորհրդային կերպարվեստագետների միությունների, իսկ 1940-ից՝ թատրոնական ընկերության:

1946 թ. փետրվարին ՍՍՌՄ ատեստացիոն բարձրագույն կոմիտեի կողմից հաստատվում է պրոֆեսորի գիտական կոչման մեջ:

Իր գրական գործունեության 55 տարում Գ. Լ[ևոնյանն] աշխատակցել է 70 անուն պարբերականների՝ տալով գրական, պատմա-բանասիրական, քննադատական և այլ հոդվածներ և ուսումնասիրություններ:

1892–1941[38] թվ[եր]ի ընթացքում հրատարակվել են նրա բազմաթիվ աշխատությունները:

Կազմել և լույս է ընծայել նաև դպրոցական ձեռնարկներ գծագրության, գեղագրության և նկարչության վերաբերյալ: Կարդացել է բազմաթիվ զեկուցումներ և հրապարակային դասախոսություններ:

Մասնակցել է Թիֆլիսում և Երևանում կազմակերպված գեղարվեստական ցուցահանդեսների իր գրաֆիկ նկարներով և քսիլոգրաֆիական[39] աշխատանքներով:

Հասարակական աշխատանքների մեջ անվճար պաշտոններ է վարել զանազան կուլտուրական հիմնարկներում երկար տարիներ:

[Կազմեց՝ Գարեգին Լևոնյան]

ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1894ք, թ. 1–3: Թողոն: Մեքենագիր՝ ինքնագիր հավելումներով:

---

[37] *ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղ:*

[38] *Ինչպես այլ դեպքերում, Լևոնյանն այստեղ 1941 թվականը «1947» չի դարձրել:*

[39] *Փայտագիր:*